SINCE 1994
FASTCREDIT

CREDIT ORGANIZATION

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ
"Fast Credit Capital" UCO CJSC

ՀՀ, 0047 ք. Երևան, Նորք Մարաշ,Գ.Հովսեփյան 32/6
32/6 G. Hovsepyan, Nork Marash, Yerevan, 0047, RA
Հ/T: (+374 10) 51 00 00
Է/E: info@fcc.am

FC1520E#29-22/CB

09.08.2022թ.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գալստյան,

Հաշվի առնելով ՀՀ ԿԲ Խորհրդի 2008թ-ի դեկտեմբերի 30-ի թիվ 373-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի 43-րդ կետը՝ Ձեզ ենք ներկայացնում «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ 2021թ-ի տարեկան գործունեության հաշվետվությունը:

Հարգանքով,

Գործադիր տնօրեն/
Տնօրինության նախագահ՝ **Դանիել Ազատյան**

Կատարող՝ Էդմոնդ Էլոյան
Հեռ.՝ (+374 10) 510 000, (15 01)

SINCE 1994
FASTCREDIT

«ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ «ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Թողարկող) 2021թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների 2021թ. տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնես արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվում է «ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն:

Կազմակերպության Տնօրինության անդամներ

Դանիել Ազատյան	Գործադիր տնօրեն/ Տնօրինության նախագահ		09.08.22թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գարեգին Դարբինյան	Գործադիր տնօրենի տեղակալ/ Զարգացման տնօրեն/ Տնօրինության անդամ		09 08 22
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Աղասի Վարդանյան	Թվային բանկինգի տնօրեն/ Տնօրինության անդամ		09.08.22
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սերգեյ Գասպարյան	Բիզնեսի կառավարման տնօրեն/ Տնօրինության անդամ		09.08.22
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արտաշես Ավետյան	Գլխավոր հաշվապահ/ Տնօրինության անդամ		09.08.22
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ «ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2021թ. ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

ՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հաշվետու տարվա վերջի դրությամբ «ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ակտիվները կազմել են 62.1 մլրդ ՀՀ դրամ՝ 2021թ.-ի ընթացքում աճելով 5.7 մլրդ դրամով կամ 10.1%-ով:

Կազմակերպության ակտիվների գերակշիռ մասը բաժին է ընկնում հաճախորդներին տրամադրված վարկերին՝ 31.12.21թ.-ի դրությամբ կազմելով ակտիվների 84.3%-ը:

Կազմակերպության վարկային պորտֆելը 2021թ.-ի ընթացքում աճել է 4.7 մլրդ ՀՀ դրամով կամ շուրջ 10%-ով՝ 31.12.21թ.-ին կազմելով 52.3 մլրդ ՀՀ դրամ: Կազմակերպության ընդհանուր պորտֆելում ՀՀ դրամով վարկերի տեսակարար կշիռը բավականին բարձր է: Այսպես՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Կազմակերպության կողմից ՀՀ դրամով տրամադրված վարկերը կազմել են 47.8 մլրդ ՀՀ դրամ, իսկ դրանց կշիռը ընդհանուր պորտֆելում կազմել է մոտ 91.3%:

Կազմակերպության դրամական միջոցները (կանխիկ դրամական միջոցներ, մնացորդներ բանկերում) 31.12.21թ.-ի դրությամբ կազմել են 2.4 մլրդ ՀՀ դրամ, որը կազմում է Կազմակերպության ընդհանուր ակտիվների 3.9%-ը:

Ակտիվների աճին զուգընթաց 2021թ.-ի ընթացքում 3%-ով աճել են նաև Կազմակերպության պարտավորությունները՝ 31.12.20թ.-ին կազմելով 39.9 մլրդ ՀՀ դրամ:

2021թ.-ի ընթացքում ներգրավված փոխառությունները գրեթե չեն փոփոխվել՝ կազմելով 26.6 մլրդ ՀՀ դրամ, իսկ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը աճել են 5.6 մլրդ ՀՀ դրամով: Այսպես՝ 31.12.20թ.-ի դրությամբ նշված փոխառությունները և վարկերը կազմել են 35.3 մլրդ ՀՀ դրամ՝ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում աճելով 17.5 %-ով:

31.12.21թ.-ի դրությամբ Կազմակերպության կապիտալը կազմել է 22.2 մլրդ ՀՀ դրամ՝ 31.12.20թ.-ի համեմատ աճելով 4.5 մլրդ ՀՀ դրամով, որը հիմնականում պայմանավորված է չբաշխված շահույթի ավելացմամբ:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Կազմակերպության զուտ տոկոսային եկամուտները դիտարկվող ժամանակահատվածի համար կազմել են 10,3 մլրդ ՀՀ դրամ:

Կազմակերպության գործառնական եկամուտները 2021թ.-ի ընթացքում 2020թ.-ի համեմատ աճել է մոտ 2.8 մլրդ ՀՀ դրամով, ընթացիկ տարվա հաշվետու ժամանակահատվածում կազմելով 11.5 մլրդ ՀՀ դրամ: Գործառնական ծախսերը 2021թ.-ին կազմել են 3.2 մլրդ ՀՀ դրամ:

31.12.21թ.-ի դրությամբ չաշխատող վարկերը (համաձայն ՀՀ ԿԲ ստանդարտների հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի դասերով դասակարված վարկեր) կազմել են Կազմակերպության վարկային պորտֆելի 14.2%՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.5%-ով: Պետք է նշել, որ դրանց գերակշիռ մասը ապահովված են բարձր իրացվելի թանկարժեք իրերի գրավներով:

Արդյունքում, 2021թ.-ին Կազմակերպությունը ունեցել է շուրջ 4.8 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթ: Կազմակերպության ակտիվների շահութաբերությունը 2021թ.-ի վերջի դրությամբ կազմել է 8.1%, իսկ կապիտալի շահութաբերությունը՝ 24.1%:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում շարունակել է աճել Կազմակերպության աշխատակիցների քանակը՝ 31.12.2021թ.-ի դրությամբ հասնելով 636-ի, որը 8%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

Կազմակերպությունը իր աշխատակիցների համար կազմակերպում է թրեյնինգներ, վերապատրաստման դասընթացներ: Յուրաքանչյուր ստորաբաժանումում ունի վերապատրաստման պատասխանատու, ով կազմակերպում է թրեյնինգներ մասնաճյուղային ցանցի աշխատակիցների համար: Կազմակերպությունում գործում է Խորհրդի կողմից հաստատված վարձատրության հաշվարկման և վճարման կարգը, որը՝ ըստ ստորաբաժանման, յուրաքանչյուր

հաստիքի համար նախատեսում է լրավճար, պարգևավճար և հաստիքավճար: Ավելին, Կազմակերպությունում նախատեսվում է տարին մեկ անգամ աշխատավարձի վերանայում:

ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Առաջիկա տարիների համար Կազմակերպությունը կանխատեսում է ապահովել կայուն աճ իր հիմնական ֆինանսական ցուցանիշների գծով: Կազմակերպությունը վարկավորումը կթիրախավորի չորս հիմնական ուղղություններով՝ Մանրածախ, ՓՄՁ և կորպորատիվ, Գյուղատնտեսական և Հիփոթեք:

Ակտիվների աճը կզուգակցվի վարկային պորտֆելի շարունակական աճով: Ունենալով ինչպես դրամային, այնպես էլ արտարժութային ռեսուրսների զգալի պաշար՝ Կազմակերպությունը շարունակելու է ակտիվ վարկավորումը: Կազմակերպությունը տրամադրում է ծրագրային վարկեր «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի, «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի հիփոթեքային վարկավորման ծրագրի շրջանակներում, ինչպես նաև տրամադրում է գյուղատնտեսական վարկեր գերմանական KFW բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում: Միաժամանակ, կազմակերպությունը իր սեփական միջոցներով կշարունակի վարկավորումը: Կազմակերպությունը կրկին պլանավորում է թողարկել դոլարային և դրամային պարտատոմսեր, ինչը նույնպես կխթանի վարկավորման գործընթացին:

Միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետազոտությունների արդյունքները հանգում են այն եզրակացությանը, որ առաջիկա տարիների ընթացքում նորագույն տեխնոլոգիաների արագ զարգացումը, դեմոգրաֆիկ փոփոխությունները, հաճախորդների նոր տեսակի պահանջմունքների ձևավորումը և կարգավորող մարմինների վերահսկողական պահանջների խստացումը բանկային համակարգը կենթարկի լուրջ փոփոխությունների:

Վերոնշյալ գործոնները էական ազդեցություն կունենան նաև հայաստանյան ֆինանսական շուկայի վրա: Սույն գործոններով պայմանավորված՝ մարտահրավերներին դիմակայելու և դրանց շնորհիվ մրցակցային առավելություն ստանալու համար Կազմակերպության կողմից նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները՝

Սպասարկման ցանցի ընդլայնում, սպասարկման գործընթացի օպտիմալացում և հեռահար սպասարկման հնարավորությունների ավելացում: Սպասարկման ցանցի ընդլայնումը պայմանավորված կլինի մասնաճյուղային ցանցի ավելացմամբ՝ հաճախորդներին առաջարկվող ծառայություններից օգտվելու հասանելիության և հարմարավետության բարձրացման նպատակով: Նշված փոփոխությունները կբարձրացնեն Կազմակերպության գործունեության արդյունավետությունը և կբարելավեն հաճախորդների կողմից մեր ծառայություններից օգտվելու հարմարավետությունը: 2021թ.-ին Կազմակերպությունը ունի 27 մասնաճյուղ Երևան քաղաքում և ՀՀ մարզերում:

✓ FC Bank բջջային հավելվածի ֆունկցիոնալության ավելացում և կատարելագործում, ինչը հնարավորություն կընձեռի մեր հաճախորդներին ավելի հեշտ ընկալել մեր կողմից առաջարկվող ծառայությունները և ավելի հաճախ օգտվել դրանցից (User friendly):

✓ Ավելի հաճախորդակենտրոն բիզնես մոդելի ձևավորում (Client Oriented), որը ենթադրում է հաճախորդների հետ հաղորդակցման գործընթացի բարելավում, ինչպես նաև ֆինանսաբանկային շուկայի ծառայությունների և սպասարկման նկատմամբ հաճախորդների կարիքների ավելի խորը ուսումնասիրություն և այդ կարիքներին բավարարող թիրախային լուծումների առաջարկում: Այս փոփոխությունների արդյունքում ակնկալվում է ստանալ հաճախորդների կողմից բարձրացված խնդիրներին ավելի արագ արձագանքում, հետադարձ կապի ուժեղացում, արդյունքում նպատակադրվելով մշտապես բարձրացնելու լոյալ հաճախորդների քանակը:

2021թ.-ի օգոստոսի 4-ին տրվել է նախնական համաձայնություն «ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ՝ վարկային կազմակերպության գործունեության տեսակի փոփոխման միջնորդագրին՝ բանկային գործունեության լիցենզիա ստանալու նախնական հավանությունը համարելով տրված: 2021թ.-ի դեկտեմբեր ամսից Կազմակերպությունը աշխատում է բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվներով: Պլանավորվում է 2022թ.-ի ընթացքում համալրել Կազմակերպության Կանոնադրական կապիտալը:

ՌԻՍԿԵՐԻ ԱՄՓՈՓ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Կազմակերպության գործունեության բնույթը ցույց է տալիս, որ այն առնչվում է ռիսկերի լայն սպեկտրի հետ: Ելնելով պորտֆելի կառուցվածքից պարզ է դառնում, որ ներկայումս Կազմակերպության գործունեությանը ներհատուկ հիմնական ռիսկերը դրանք շուկայական և վարկային ռիսկերն են:

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ

Կազմակերպության խնդրահարույց վարկերի (համաձայն ՀՀ ԿԲ ստանդարտների հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի դասերով դասակարգված վարկեր) ցուցանիշը 31.12.2021թ.-ին կազմել է 14.2%: Հարկ է նշել, որ դրանց գերակշիռ մասը ապահովված են բարձր իրացվելի թանկարժեք իրերի գրավներով: Մեծ մաս են կազմում սուբյեկտիվ դասակարգված վարկերը:

Կազմակերպության վարկային քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի բարձրացումը: Շարունակվում են համապատասխան միջոցառումներ իրականացվել վարկերի տրամադրման որոշումների կայացման ավտոմատացված համակարգերի ստեղծման՝ այդ թվում ներքին սքորինգային համակարգերի ինտեգրմամբ:

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՌԻՍԿ

Կազմակերպության գործունեությանը ներհատուկ հիմնական շուկայական ռիսկերն են արտարժութի, տոկոսադրույքի և գնային ռիսկերը:

2021թ.-ի ընթացքում ՀՀ ԿԲ-ն 6 անգամ վերանայել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը, որի փոփոխությունը պայմանավորված էր կարգավորողի կողմից վարած դրամավարկային քաղաքականությամբ: Պայմանավորված աշխարհում և մասնավորապես ՀՀ-ում գնաճի բարձր մակարդակով՝ 2021թ.-ի ընթացքում վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացվել է 2.25 տոկոսային կետով՝ կազմելով 6.25%: Վերաֆինասավորման տոկոսադրույքի բարձրացումները, որպես հետևանք բերել են շուկայական տոկոսների աճին, ինչպես նաև ՀՀ դրամի արժևորմանը:

Հաշվետու ժամանակահատվածում Կազմակերպությունը ունեցել է կարճ դոլարային դիրք, որը ամբողջությամբ գտնվել է կառավարելի մակարդակում: Եվրո և ՌԴ ռուբլի արտարժույթներով դիրքերը հիմնականում պահվել են փակ:

Կազմակերպության վարկային պորտֆելում գերակշիռ մաս են զբաղեցնում ոսկու գրավով տրամադրված վարկերը: Ներդրված է խնդրահարույց վարկերի գրավի բռնագանձման և վաճառքի բավական արդյունավետ գործընթաց, որի շնորհիվ ոսկու գների փոփոխությամբ պայմանավորված գնային ռիսկը հնարավորինս նվազեցվում է:

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Կազմակերպությունում գործում է գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ, որի հիմնական բաղադրիչներից են գործընթացների արդյունավետ մշտադիտարկումը և կառավարումը, իրավասությունների և պարտականությունների հստակ ձևակերպումը և բաժանումը, ռիսկերի

հայտնաբերման, ուսումնասիրման և զսպման ուղղությամբ տարվող պարբերական աշխատանքները:

Կազմակերպությունը ապահովում է կառուցվածքի, գործարար գործընթացների, ռիսկերի կառավարման, հաշվետվողականության և վերահսկողության ներքին հսկողության համալիր համակարգ՝ ապահովելով Կազմակերպության ակտիվների պահպանումը, գործունեության անընդհատությունը, ներհատուկ ռիսկերի ժամանակին բացահայտումը ու կառավարումը, ինչպես նաև գործունեության համապատասխանության ապահովումը գործող օրենսդրությանը և Կազմակերպության ներքին իրավական ակտերին:

Կազմակերպությունում առկա են Ներքին աուդիտի, Ռիսկերի կառավարման և համապատասխանության ստորաբաժանումներ, որոնց գործառույթներից է նաև ներքին հսկողության համակարգի արդյունավետության բարձրացումը:

Ներքին դիտարկումների պատասխանատուն իրականացնում է փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման դեմ ուղղված գործառույթներ, ինչի շրջանակներում դիտարկվում են ընկերությունում կատարված գործարքները, բացահայտվում են հնարավոր ՓԼԱՖ ռիսկերը և դրանց վերաբերյալ Կազմակերպության խորհրդին և լիազոր մարմնին ներկայացնում են հաշվետվություններ՝ ՓԼԱՖ դեմ պայքարի օրենքով և լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված կարգով:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

2021թ.-ին «ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն իր գործունեությունը ծավալել է՝ ապահովելով իրացվելիության անհրաժեշտ մակարդակ: Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների կառուցվածքի համադրումից երևում է, որ պարտավորությունները հիմնականում միջնաժամկետ և երկարաժամկետ են, որոնք տեղաբաշխված են կարճաժամկետ և արագ իրացվելի թանկարժեք իրերի գրավով վարկերի տեսքով: Բացի այդ՝ նախորդ տարիների փորձը

ցույց է տալիս, սեփականատերերից ներգրավված փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսները նույնպես վերաձևակերպվել են փոխառության, հետևաբար քիչ հավանական է համարվում դրանց վաղաժամկետ մարումը: